

ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мелі».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խաւարանի տողատեղին 10 կոպէկ:

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հանգուցեալ

ՔՐԻՍՏԱՆՓՈՐ ԿԵՐԵՆ-ՄՈՒՐԱՅԷ

Մայրը, ամուսինը, եղբայրները եւ բոլորը յայտնում են իրանց խորին հորհակալութեամբ
որ բոլոր այն անձանց եւ հիմնարկութիւններին, որոնք թէ անձնական իրանց ներկա-
յութեամբ հոգեհոգեւորական եւ թաղման, թէ իրանց հեռագիրներով եւ նամակներով
յարգեցին հանգուցեալի յիշատակը:

1—1

ՊԵՏՐՈՒՍ ՄԻՆԵՎԻԶ ՄԱՍԿԱՐՈՎ

Մանր հիւանդութիւնից յետոյ, կամօքն Առտոնոյ, ապրիլի 8-ին, առաւօտեան 7
ժամին մահացաւ:

Այդ բանի մասին արտի ցաւով նրա կին Մարիա Եմէլիանովնան եւ որդիքը՝ Գրիգոր,
Նիկոլայ եւ Ալեքսանդր Պետրովիչներ յայտնում են ազգականներին եւ ծանօթներին
Ամբիճը կը լինի ամէն օր, երեկոյան 7 ժամին Մարմին յուղարկուողութիւնը տեղի
կունենայ սեկիական տանից, Կիրակիցնայ փողոցի վրա, հինգշաբթի, ապրիլի 11-ին,
առաւօտեան 10 ժամին դէպի Զրիկինանց եկեղեցին, հրիւրօգովսկայ փողոցի վրա, իսկ
այնտեղից դէպի Վերայի գերեզմանատունը:

1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ վիճակի մէջ է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

Մամուլ, Նամակներ Ծամախուց. Նոր-Բայազէ-
թից, Սիմֆերոպոլից, Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ՍԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նամակ
Շուրջը:

ԻՆՉ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է

Պաւառներէն ստացած մեր տեղեկու-
թիւնները ցոյց են տալիս, որ վերջին
հիւղովից օրերը մեր երկրի ընդարձակ
տարածութեան վրա ձիւն է եկել եւ ջրը
սեղ է եղանակը: Բուսականութիւնը վր-
նաւել է այն տեղերում, որտեղ նա վաղ
կենդանացել էր եւ սկսել էր աճել: Այդի-
նքի եւ բանջարանոցների մի մասը կրել է
զրպի վնասներ:

Լեռնային մասերում, ուր ձմեռվայ ձիւ-
նը դեռ չէր հալվել եւ երկրը նոր-նոր

սկսել էր տաքանալ, նորիկ ձիւնը վնաս չէ
հասցրել, միայն ծածկել է արօտները տը-
նային անասունների համար:

Անկասկած, եկած ձիւնը մի քանի օրում
կը հալվի եւ երկրը կը կենդանանայ բու-
սականութեամբ: Եթէ նոր ցրտեր տեղի
չունենան, կարող է բուսականութիւնը
շատ տեղերում դրսոյթի եւ զարգանալ
կանոնաւոր կերպով: Ձմեռը անցել էր շատ
չոր եւ շատ տեղեր զանգառովում էին անձ-
րեւի եւ ձիւնի պակասութեան վրա: Ե-
կած ձիւնից եւ անձրեւից բուսականութիւ-
նը կարող է մեծապէս օգտվել, եթէ սառն
բաւիներ չը լինեն եւ նորաբոյս բողբոջները
չը վնասեն:

Սակայն նախօրը ոչինչ չէ կարելի
զուշակել: Այս տարվայ օտարտի ձմեռը
եւ նոր եկած մեծ ձիւնները կարող են ա-
ռիթ լինել նոր անսպասելի պատահու-
թիւնների:

Յամենայն դէպս պէտք է նախօրը հո-
գատարութիւն ունենալ եւ եթէ եղած

համար այդ անունը, նոյնքան սիրելի էր,
բաղդարանչիւն: Սիրեցի այդ անունը, սիրեցի
եւ նրան կողմնաւոր իսկ թէ ինչու, ես այդ չը
գիտեմ, ես հոգեբան չեմ, որ զրա պատճառը
բացատրեմ: Բայց որ ես սրտատրոփ սպասում
էի նրան տեսնելու, այդ արդէն ձիւն է:

Ուրախութեամբ չափ չը կար, երբ լսեցի մի
օր, որ Կարա-Մուրզան Շուշի է գալիս խումբ
կազմակերպելու ձիւնը չը գիտեմ, թէ այդ օր
Թաւկանին էր, միայն այսքանս գիտեմ, որ ես
սեմինարիայի ստորին դասարանները աշակերտ
էի: Փորձերը մեր դպրոցի դահլիճում պէտք է
լինէին: Այդ բանը ինձ չափազանց ուրախոց-
րեց: Մի գեղեցիկ օր դպրոցի ահագին դահլիճը
լցված էր երկսես հասարակութեամբ, այստեղ
կային կանայք, օրիորդներ, բնակիչներ եւ
հասարակութիւնից շատ շատերը, որոնք բո-
լորն էլ մի տեսակ ուրախ էին տրամադրված
էին սպասում էին Կարա-Մուրզայի գալու-
թեան: Երբ դուրս գացաւ, եւ ներս մտաւ նա,
Չը գիտեմ ինչ պատահեց ինձ հետ, միայն
այսքանս կասեմ, որ նա իսկապէս սպասածին
համեմատ տարօրինակ թւաց ինձ: Տարօրինակ
էին մասնաւոր նրա չափազանց երկար մազերը,
որոնք ալիքաձեւ թափվել էին նրա ուսերի
վրա: Երբ նրան տակից երեւում էին նրա
մեղմ ու կրակոտ աչքերը, ձակտը բաւական
լափ էր, իսկ նրա մարմնը կազմուածքն ու
դէմքի արտայայտութիւնը մի տեսակ վեհու-
թիւն էր արտայայտում: Դահլիճում լուծութիւն
էր տիրում, ամենքը սպասում էին, թէ ինչ կը
խօսէ նա: Կարա-Մուրզան բոլորին սիրելի
կերպով բարեւելուց յետոյ բացատրեց, թէ ին-
չու է հրաւիրել ներկայ եղողներին եւ ապա

ցանքները վնասվեցին, անհրաժեշտ է մի-
ջոցներ ձեռք առնել, որպէս չի դաշտերը
ցանվեն նոր սերմով եւ այդպիսով մեղմաց-
նեն վնասի սաստկութիւնը:

Մեզ համար հետաքրքրական են տեղե-
կութիւններ, թէ արդեօք եղե՞լ են զգալի
վնասներ մեր երկրի վանազան մասերում,
թէ վնասը կարող է և թուլանալ յետա-
գայ աճող եղանակի շնորհիւ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Պատկերաւոր ամսագիրներից մէկը, «Миръ
Божій», որ մի եւ նոյն ժամանակ ամենից շատ
տարածված ամսագիրն է, երկու ծանր կորուստ
ունեցաւ: մի քանի ժամանակ առաջ վախճան-
վեց նրա հրատարակչուհի տիկին Ա. Դավիդովա,
իսկ մի քանի օր առաջ վախճանվեց եւ խմբա-
գիր Վիկտոր Օստրոգորսկի, որ յայտնի էր իբրեւ
զարդական գործիչ եւ գրող: Ամսագիրը հիմ-
նեց Ա. Դավիդովան տաք տարի առաջ, եւ
եթէ այսօր այդ համակերպի եւ օգտակար ամ-
սագիրը հասել է այնքան ծաղկած դրութեան,
այնքան շատ տարածված է եւ սիրված Ռու-
սաստանում, զրա գլխաւոր պատճառը հանգու-
ցեալ Ա. Դավիդովայի անխնայ եռանդն էր եւ
վառ սէրը դէպի գործը: Հաղորագրում է այդ-
պիսի գործիչը ոչ միայն կանանց, այլ եւ տու-
մեղ սեռին—տղամարդկանց մէջ: Սկսելով գործը
համեմատ չափերով, նա ամբողջովին նուիրվեց
այդ գործին: Ոչինչ զոհողութիւն չը խնայեց,
աշխատում աքնուկ էր անձուիրաբար եւ այդ-
պիսով կարողացաւ կատարեալ ավարտութեամբ
պատկերել իր ձեռնարկութիւնը: Մեզանում կա-
ծում են, թէ լաւ հրատարակիչ լինելով չէ կար-
ելի խոշոր հասարակական գործ կատարել:
Նոյն իսկ տեղ վաստակել զրականութեան պատ-
մութեան մէջ: Բայց թէ որքան սխալ է այդ
կարծիքը, շատ պարզ ցոյց են տալիս մի շարք
նուա հրատարակիչներ, որոնք այնքան բարի ա-
նուն են գեղեցիկ յիշատակ թողելներ: Այդպիսի
անուններից մէկն է յայտնի Պավլենկովը, Սոլ-
դատենկովը, Դրանք գրողներ չէին, բայց հա-
րիւրաւոր գործերից բարձր անուն են թողել
իրանց հրատարակչական գործունէութեամբ:

սկսեց նրանց ձայների բաժանել: Մի քանի րո-
պէսում հանդիսականները իրանց ձայների հա-
մեմատ չորս մասի էին բաժանված, որոնց թը-
ւում գտնվում էր եւ ես: Նրա աշխոյժը, ե-
ռանգը ուղղակի ինձ զարմանք էին պատճա-
ռում:

—Փառքով ժամից յետոյ դուք քառաձայն երգ
կը լսէք, ասաց նա, եւ սկսեց առաջին ձայնից:
Նա մի այնպիսի համոզմունքով արտասանեց
այդ խօսքերը, որ մեզանից իւրաքանչիւրը կա-
մայաւակամայ նրա համոզմունքին գալով՝ զգում
էր, որ իսկապէս շուտով քառաձայն երգ կը
լսէ: Եւ միթէ այդ մարմնացեալ համոզմունքը
չէ, որ բոլորին կապում էր Կարա-Մուրզայի
հետ: Մեր հայրենիքը որոշած ժամին արդէն
պատրաստ էր: Ինչպէս, միթէ այդ կարելի ըն-
է: Բայց չէ որ մեր ձայնագրութեան ուսու-
ցիչը նոյն իսկ որ եւ է միաձայն երգ ամբողջ-
րի ընթացքում էր սովորեցնում, այն էլ բար-
կացած ժամին Սալոմեաները աշակերտների զը-
խին տալով: Առաջին անգամ էի տեսնում
մարդկանց մէջ այդպիսի ահագին տարբերու-
թիւն: Մի քանի օրվայ մէջ արդէն կոնցերտի
ծրագիրը մէջ պարունակող երգերը գիտէինք:

Պարագլուխները այնքան ուրախ ու աշխոյժ
էին կատարում, որ ոչ ոք մի գոգոնութիւն
Փորձի ժամանակ նա գիտէր բոլորի հայեացքը
ներքի իր վրա կենտրոնացնելու Յիշում եմ, թէ
ինչպէս մի պարոն մի քիչ անուշադիր էր զը-
տնվել իր հայեացքը ուրիշ կէտի վրա գցելով:
Այդ ծուռ հայեացքը չը վերաբերէր Կարա-Մուր-
զայի աչքերին: Ո՛հ, պարոն, զարձաւ նա պա-
տանու. ձեր բոլորի հայեացքները պէտք է

Հրատարակչին էլ կարող է, առանց ինքը ան-
ձամբ գրող լինելու, յայտնի ուղղութիւն, յայտ-
նի դադարները անցկացնել իր հրատարակու-
թիւնների ընտրութեամբ: Նա կարող է հոգի
մտնել իր գործի մէջ, ուղղել նրան լուսաւոր,
առաջադէմ ճանապարհով: Այդպիսի համակերպի
հրատարակիչ էր եւ Դավիդովան: «Миръ Божій»-ի
վերջին համարում տպված են մի շարք յոդուած-
ներ այդ եռանդուն կին-գործիչի մասին: Դրան-
ցից մէկի մէջ մենք կարդում ենք.

Նա պահանջում էր համակերպութիւն եւ
օրեկօվ վերաբերմունք, բայց դրանից նա
չէր դառնում մի անտարբեր անձ, մասնաւոր
հասարակական հարցերում: Այստեղ նա ար-
դէն անողք էր եւ չէր թող տալիս որ եւ է
կոպրովիս: Ոչ մի անի կողմից—միւս կող-
մից եւ չեմ հասկանում կամ այս կամ այն,
ինչ էլ դրանից դուրս գայ, ասում էր նա
սովորաբար ծանր րօպէներում, երբ գործի
պայմանները յանկարծ բարդվում էին եւ
հարկաւոր էր լինում շատ զգոյշ լինել: «Մայ-
րայից դէպքում աւելի լաւ է կատարեալ
լուծութիւն պահպանել, քան շտապով փորձեր
անել իր խօսքը ասելու, երբ այդ խօսքը չէ
կարելի ասել կատարեալ անկեղծութեամբ: Այդպիսի
ծանր րօպէներից մէկում, կշռելով
բոլոր զոհողութիւնները եւ դրանց դէմ
կուելու միջոցները, Դավիդովան հանգիստ,
բայց հաստատ կերպով յայտնեց, թէ ինքը
աւելի լաւ է համարում ամսագրի մասը,
քան նրա ուղղութեան փոփոխութիւնը, մի
ուղղութեան, որ տարիների ընթացքում է
մշակվել եւ ճշմարիտ է համարվում:

Ահա թէ ինչպէս են մտածում եւ գործում
իրանց կոշտը հասկացող, իրանց դասանալ-
ների համար ամէն ինչ մոռանալու պատրաստ
մարդիկ: Մի դադարաւարական կնոջ այս խօս-
քերն ու գործը մենք յանձնարարում ենք մեր
այն խճուկ զրական գործիչներին, որոնք ներ-
կայումս իրանց փրկութիւնը գտնում են միայն
նրա մէջ, որ բղաւում ձգաւում են, թէ պէտք
չէն հաստատ ու որոշ ուղղութիւններ, թէ մի
յայտնի գոյն, դէմք ունենալով դժբախտութիւն
է, կործանում է, մահ է: Վաղուց ենք մենք
լսում այդ աղաթակները, վաղուց գիտեմք, որ
զրանք զրականութիւնը չարիական խանութ
դարձած ժողովանց միակ յոյսն են դարձել:
Իրանց հոգու աղքատութիւնը ծածկելու հա-
մար Մենք չենք կարող ուղղութիւն դարձ-
նել հայկական այդ նոր աշխարհայեացքի
վրա, որովհետեւ գիտեմք, որ դա անբովանդակ,

վերջանալու ձեռքին վրա եւ ոչ թէ նրա տակով
ուրիշ կէտերի վրա ծանրանալ, ինչպէս այն
այն օրերին է, որի վրա կենտրոնացած է ձեր
հայեացքը: Ընդհանուր էր ծիծաղը. սակայն
մի րօպէ չանցած՝ գործը իր կարգով շարու-
նակվեց:

Մեր խումբը, եթէ չեմ սխալվում, 80 հոգուց
էր բաղկացած: Կոնցերտը ահագին բազմութիւն
էր գրաւել պ. Խանդավազեանի թատրոնական
դահլիճը: Կարա-Մուրզայի ավարտութիւնը այդ
երեկոյ կատարեալ էր: Հանդիսականները ան-
վերջ ծափահարութիւններով ընդունեցին նրան:
Մի երկու աշակերտ կոնցերտ տալով, իսկ վեր-
ջում իր խումբը տեղական տարազով նկարել
տալով, մի օր շնորհակալութիւն յայտնեց բոլո-
րին եւ յայտնեց, որ միւս օրը մտադիր է Թիֆ-
լիս ուղեւորվելու: Կարծես թէ բոլորի վրա
ստու ջուր մաղվեց կարճ ժամանակամիջոցում
մենք այնպէս էինք կապվել նրա հետ, որ ան-
շատվել անկարելի էր թւում: Սակայն, հակա-
ռակ մեր ցանկութեան, միւս օրը ճանապարհ
էինք գցում Կարա-Մուրզային:

Երկրորդ անգամ ես նրան Թիֆլիսում տեսայ:
Այդ ոյժն է, ընթերցող, որ այլ եւս գոյու-
թիւն չունի: Նա մի աստղ էր հայկական խա-
ւար անդատանում, որ փայլեց կարճ ժամա-
նակով, բայց այդ կարճ ժամանակամիջոցում
կարողացաւ իր քնարի քաղցրահնչուն լարերով
մեղմացնել հայի կողապաշտ սիրտը եւ մայրների
երգը նրան սիրելի դարձնել:

Եւ, ընթերցող, դուրս խոնարհներ այդ ոյժի
առաջ:

Մարտիրոս Ղահրամանեան

ժամանակի խեղճութեան մի հիւանդոտ երեւոյթ է եւ ուրիշ ոչինչ:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Ապրիլի 4-ին

Ամբողջ մի շաբաթ խաղաղ անցնելուց յետոյ, ամսին 3-ին, երեկոյեան 9 ժամ 46 րոպէին զգալից նորից երկրաշարժի բաւական զօրեղ մի ցնցում: Նոյն գիշերը ցնցումները կրկնվեցին թոյլ կերպով 10 ժամ 34 րոպէին եւ 10 ժամ 44 րոպէին: Կային վկայողներ, թէ մարտի 29 եւ 30-ի գիշերվայ 9—11 ժամերի միջոցում եղել են չորս թոյլ տատանումներ էլ: Առնաաւարակ երեկոյեան ժամը 7-ից յետոյ աւելի է տեղի ունենում շարժը, բայց ճիշտ հաշիւը դժուար է լինում պահել ու գիշերին, երբ մարդիկ քնած են լինում:

Աղետից յետոյ այստեղից հեռացողները մի մասը սկսել է արդէն բնիկ վերադառնալ: Մնացողներին ուրախացնող այդ անհիւրընկալութեան պատճառը Բագրի աշտման կրկնվումն են բացատրում եկողները. բայց քնացածների մի մասին էլ քայտում, բերում է արդէն բողբոջող գարնան հրապուրանքը:

Քաղաքային բժշկի խօսքով, բարակներում բժշկվողների մէջ երեւացել են տիֆով հիւանդացանքներ: Քաղաքի առողջապահական վիճակը բարձրագոյն է կարելի համարել այն հանգամանքով, չորսօրեւ, որ բնակիչները եւ զօրքը, որոնք ապրում են ոչ իրանց նախկին բնակատեղիներում, չունեն օրինաւոր չինված արտաքննողներ, եւ նրանք ապականում ու վարակում են շրջակայքը: Բնակիչները երկելով մէջ են, որ չը լինի թէ հիւանդութիւնը հետզհետէ մեծ ծաւալ ստանայ: Մեծարժեք է ուշադրութիւն դարձնել թէ այն եւ թէ այլ կեղտոտութիւնների վրա եւ լուրջ նայել սպասող վարակման քաղաքի վիճակը այս կողմից պիտի անպայման բարւոքել, որ արդէն մի կարիքի վրա միւսն էլ չաւելանայ:

Տեղական կոմիտեան մինչեւ այժմ արդէն 100,000 ռուբլուց աւելի գումար է ծախսել կարօտեալների զանազան կարիքների եւ այլ անհրաժեշտ ծախսերի վրա: Բայց քաղաքի այլ ընկնող դասակարգի շրջաններում տարբերում են, ամենքի բերանից լսվում են գանգատներ թէ շատիկներն անուն կոտրեց, աղքատ ծանախվեց, նրա տունում փողեր հանգանակվեցին, իսկ ինքը մասն էլ չը լիցեց, որ տեսնէ քաղաքի է թէ դառն է:

Բացի քաղաքային վարչութեան մէջ ծառայողներից, որոնց մի մասը հէնց փետրվարի 1-ից արձակվեց, մնացած միւս բոլոր հիմնարկութիւններում ծառայող պաշտօնականներն, ուսուցիչներն, զինուորականներն եւ շատ ուրիշներն իր օգնութիւնն աչքի ընկնող քանակութեամբ գումար բաժանվեց: Ժողովուրդը ստորագրում է մի խնդրը, զինուորական միաստորի անունով գրված, որով խնդրում են տեղային գունդը չը հեռացնել այստեղից:

Ս. Սարգիսբեկեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Մարտի 26-ին

Երեւանի նահանգական դատարանի քրէական բաժինը այս մարտի 11-ից սկսած ժամանակաւորապէս գործում է Նոր-Բայազետում: Ի միջի այլ գործերի, մարտի 23-ին քննվում էր նաեւ մի բարդ եւ ամենքին հետաքրքիր մարդասպանութեան գործ, որ հետեւեալ բնաւորութիւնն ունէր:

Անցեալ 1901 թիւին, երկու հոգի հայ վաճառականներ—Համարաձումեան եւ Տունեան—Գանձակի գաւառից գալով մեր կողմերը, շրջում էին թէ Նոր-Բայազետում եւ թէ այդ գաւառի զանազան գիւղերում՝ գորգեր եւ կապերտներ գնելու նպատակով: Շարունակ քննարկում հայ եւ թուրք գիւղերում եւ անցնելով մի քանի գիւղեր՝ նրանք հասնում են Նոր-Բայազետի գաւառի Տաշքենթ թուրք գիւղը, որտեղ իջեւանում են իրանց մի ծանօթ տուն, այն է բէգեր՝ Ամրաստան, Հասան-Ալի եւ Աբաս Մէյթի-բէկ օղլիների տունը, որտեղ գտնվում էր նաեւ իրանց ազգական Հաբիբ-բէկ իսմայիլ-բէկ օղլին:

Տանտէրերը մտածելով, որ իրանց հիւրերը, իբրեւ «խալիչա քնոյներ», բաւական փող կունենան, հէնց այդ գիշեր քնած տեղ սպանում են իրանց հիւրերին եւ դիակները տապալկների մէջ դրած՝ գցում են իրանց տանը կից մի հորի մէջ, որի վրա նորից նոր մի պատ են շարում հասարակ ըստից եւ մի ահագին դէպ խոտ

դարում վրան: Սպանելուց յետոյ, ինչպէս երեւաց գործից, հանում են գրպաններից 1000-ից աւելի փող եւ թագցնում են երկու ձիերը իրանց բեռներով:

Մի ժամանակ անցնելուց յետոյ, «անյայտացած» վաճառականների նուանիքները, երկար սպասելով իրանց զարկների գալուն, սկսում են փնտրել նրանց եւ յայտնում են պոլիցիային: Ապա սպանվածների մարդիկը գալիս են եւ մեր գաւառը եւ հարց ու փորձով ու տեղեկութիւններ առնելով այս եւ այլ գիւղից՝ հետք տանում—հասնում են մինչեւ վերը յիշած Տաշքենթ գիւղը, որտեղ իսկապէս անյայտանում են գորգ առնողները:

Պէտք է ասած, որ առաջին օրերում շրջանային պրիստաւը չէ կարողանում գտնել այդ ոճրագործութեան հետքը: Սակայն չարագործների զբաղմունքից մէկը, տեղեկութիւն ունենալով այդ մասին, ծածուկ իմացում է պոլիցիային եւ նշաններով ցոյց տալիս գիւղից տեղը: Գալիս են եւ նորից փնտրում—որոնքում են, քանդելով թէ խոտը դէզը եւ թէ նրա տակի պատը, եւ ահա իսկոյն հորից փչում է սարսափելի հոտ: Իսկոյն բանտարկում են վերեւ յիշած բէկ-աղաքներ՝ Ամրաստան, Հասան-Ալի, Աբաս, Հաբիբ եւ տան ծառան եւ ահա այդ գործի քննութիւնը նշանակված էր մարտի 23-ին, որի համար կանչված էին 40-ից աւելի վկաներ: Մեղադրվող երեք եղբայրներից մէկը՝ Հասան-Ալին, կամենալով իր վրա վերցնել մեղադրական գործի մամուլը՝ ծանուցեցին եւ ազատել միւսներին, դատարանում խոտովանվեց իր յանցանքը, ասելով թէ ինքն է սպանել եւ իր եղբայրները անմեղ են այդ գործում, տանը չեն եղել այդ գիշեր... Վկաներից շատերը, որոնց մեծ մասը մեղադրվողների գիւղացի թուրքեր էին, ըստ երեւոյթի, ցանկանում էին, որ պատժվեն չարագործները, յատկապէս այն նրկատմամբ, որ անմեղ տեղ քնած մարդ կանց վրա ձեռք են բարձրացրել:

Դատարանը արձակելով իր արդար վճիռը՝ յայտնեց,—վերցնել բէկ-աղաքներն կոչվելով մեղապարտների վրայից եւ դատապարտել տաճական կրօնաւորների Ամրաստանին՝ 15 տարի, Հասան-Ալիին եւ Հաբիբին՝ 12 տարի եւ Աբասին՝ 6 տարի ժամանակով, իսկ ծառային՝ արգելադրեց: Բացի այդ, յօդուտ սպանվածների ընտանիքի դատարանը վճեց 1100 ռուբլի դատապարտվածների կայքերից, որոնք արդէն կանոնով ցուցակագրված էին՝ իբրեւ նախնական ապահովութիւն մինչեւ գործի վերջնական լուծուծումը: Վճիռը մեծ հաճութեամբ լսեց ներկայ եղող հասարակութիւնը եւ, ըստ երեւոյթի՝ դուր մնաց:

Կոստ

ՆԱՄԱԿ ՍԻՄՅԵՐՈՊՈԼԻՑ

Ապրիլի 2-ին

Մարտի 31-ին նշանակված էր ծխականների ընդհանուր ժողովը տեղի ու. Վերափոխման եկեղեցու աղքատաց հոգաբարձութեան 1901 թիւի միամեայ հաշիւը քննելու եւ հաստատելու համար: Կանոնադրութեան համաձայն՝ նախորդ երեք կիրակիներին այս մասին եկեղեցում ծանուցումներ եղան ժամը 7-ից 15—20 ր. անց էր, երբ վերջապէս ժողովականների օրինական թիւը լրացաւ: Ներկայ էին ժողովի 21 հոգի, բոլոր հարաւորների թիւը 200 էր:

Աղքատաց հոգաբարձութեան նախագահ պ. Յովսէփ Ալիեան, պարզելով ժողովի նպատակը՝ առաջարկեց ժողովականներին ընտրել վերապատուելի յանձնաժողովի 5 անդամ՝ հոգաբարձութեան միամեայ հաշիւը քննելու: Վերապատուելի յանձնաժողովի անդամներ ընտրվեցան պ. պ. Գ. Սիմեոնեան, Գ. Բուշարեան, Յ. Սեմեոնեան, Ռ. Բասաբեան եւ Ս. Թովմասեան: Ընդհանուր ժողովը միաժամանակ ընդմիջվեց: Վերապատուելի յանձնաժողովի անդամներն առանձնացան, եւ անմիջապէս անցան հոգաբարձութեան միամեայ հաշիւները քննելու գործին: Գնդով հաշիւները՝ վերապատուելի յանձնաժողովը մատուցանեց կանոնաւոր եւ ճիշդ գտաւ, կարեւոր փաստաթղթերն ու գրամը պատրաստի: Այս մասին զեկուցվեց ընդհանուր ժողովին, որը եւ իր ստորագրութեամբ հաստատեց հոգաբարձութեան միամեայ հաշիւը:

Աղքատաց հոգաբարձութեան իր գործունէութեան նկատմամբ տպագրած հաշիւից հարկ ենք համարում քաղաքապետ Բաղդուր Բերկուհեանեանը:

Հոգաբարձութիւնը 1901 թիւի ընթացքում ունեցել է 14 նիստ: Այդ նիստերի խորհրդակցութեան առարկաները եղել են ընթացիկ գործերը, չբաւարարող նպատակ տալու վերաբերեալ

խնդիրներ: Հոգաբարձութեան խնամքի տակ եղել են 21 ընտանիք փոքրահասակ երեխաներով եւ գործի անընդունակ 9 անձինք: Հոգաբարձութիւնը, բացի իր մշտական խնամքի տակ գտնվողներից, նիւթապէս օգնել է նաեւ իսկապէս կարիք ունեցող դրսի այլ անձնաւորութիւններին: Հոգաբարձութեան գործունէութիւնը կայացել է սրանով. 1) չբաւարարող խաղանքների որդիներին, նոյնպէս եւ տեղիս հայոց զարոյցի աշակերտներին չոր է տուել: 2) միանուագ օժանդակութիւն (թաղման, բժշկութեան, ճանապարհաւարի) է տուել: 3) վառելիք, 4) այլ եւ այլ զարոյցների չբաւար հայ աշակերտների ուսման թոշակ է վճարել, հոգացվել են հայոց զարոյցի զարմեթացն աւարտող աշակերտների պիտոյքները, միջնակարգ դպրոցների մանուկ համար: Հոգաբարձութիւնը իր միջոցներով Ս. Միսիրեանի նուիրած տան բաւկի ազատ մասում երեք բնակարան է շինել: այդ բնակարանները նստել են 2992 ր. 15 կ.:

Հոգաբարձութիւնը միջոցները առ 1-ին յունվարի 1902 թ. կազմում են Ս. Միսիրեանի նուիրած տունը, անձնութեան գումար 14683 ր. 80 կոպէկ, ընթացիկ ծախսերի համար 2782 ր. 81 1/2 կոպէկ *): Հոգաբարձութեան կառավարութեան տակ են գտնվում հանգուցեալ Ս. Միսիրեանի տունը եւ տեղիս հայոց գերեզմանատունը, որոնց հաշիւները ջոկ են պահվում: Առ 1-ին յունվարի 1902 թ. Ս. Միսիրեանի տանից, դուրս գալով ծախսերը, մնում է 658 ր. 73 կ., գերեզմանատանից 139 ր. 26 1/2 կոպէկ: Անձնութեան գումարի մէջ նախորդ տարիների հաշիւներից աւելացած են հետեւեալ նոր գումարները.—1) Վարդերես Թումանյանի նուիրած 2903 ր. 80 կոպէկ, որպիսի գումարը դրված է այն պայմանով, որ գումարի տոկոսը ցմա՛հ տրվի իրան, իսկ մահվանից յետոյ անցնէ հոգաբարձութեանը: 2) 1380 ր. մի գումար, որ հայ համայնքից է հանգանակված զարոյցի նախկին հոգաբարձուներ Յ. Սիմեոնի եւ Յ. Բուշարեանի անունով պետական դպրոցներում թոշակաւորներ պահելու համար:

Ներկայումս աղքատաց հոգաբարձութեան անդամներ Ս. Միսիրեանի եւ Յ. Բուշարեանի հակողութեամբ 18 բնակարան է շինվում բաղաձիւղով հանգուցեալ Ա.Ա. Սպենդիարեանի նուիրած տան բակում, չբաւար եւ աշխատելու անընդունակ ծերերի համար, հանգուցեալ Սպենդիարեանի եւ նրա վաղամեռիկ որդու Լեւոնի յիշատակին: Այդ շինութիւնը այս տարվայ սեպտեմբերի 15-ին պատրաստ պէտք է լինի: Այդտեղ ընդունվելու են աշխատանքի անընդունակ ծերեր եւ չբաւարներ, որոնք ստանալու են հոգաբարձութիւնից ձրի վառելիք, ջուր եւ բժշկական օգնութիւն: Փոքր եւ պատիւ հանգուցեալի ժամանակ պ. Ա. Սպենդիարեանին, որ իր հօր բանաւոր կտակի համաձայն՝ աղքատաց հոգաբարձութեան տրամադրութեան տակ դրեց կարեւոր դրամը, աղքատացնող շինելու համար, որով յաւերժացեց ընդմիջող իր հօր եւ վաղամեռիկ եղբոր յիշատակը: Տեղիս հայ հասարակութիւնը, մասնաւորապէս չբաւար դասակարգը, անչափ գոհ է եւ ուրախ մի այդպիսի բարեկամական հաստատութեան գլուխ գալուն, օրհնում է Սպենդիարեանի յիշատակը:

Աղքատաց հոգաբարձութեան հաշիւով օտար քաղաքներում սովորում են երկու հոգի, մինք Օղեսայում՝ նկարչական դպրոցում (ուսանողը թիւրքերից է, տեղիս հայոց դպրոցն աւարտած), միւսը՝ տեղացի, սովորում է Ներսիսեան դպրոցում:

Հոգաբարձութեան տպագրած միամեայ հաշիւը, պէտք է ասած, խնամքով է կազմված եւ օրինակելի է: Հոգաբարձութիւնը եռանդով գործում է, աշխատում, նա չնորհալարութեան արժանի է:

Ժողովի վերջը նախագահը յայտնելով, որ հոգաբարձութեան անդամ պ. Վ. Սիմեոնեանը, քաղաքից շատ անգամ գործով բացակայ գրտնվելու պատճառով, անկարող է իր պաշտօնը կատարել, հրաժարվում է անդամութիւնից, եւ առաջարկեց նրա տեղ մի նոր անդամ ընտրել: Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց պ. Յ. Բուշարեան (նստար):

Կ.—Յի

*) Հոգաբարձութեան միամեայ հաշիւի մուտքի չօգտանքներից մէկում աչքի է զարնում եկեղեցում կախված զանազանիկի արդիւնքը. այնտեղից հանված է մի հարկի լուրջանոց թղթադրամ եւ 2 հատ 10 ռուբլուանոց ոսկի Սառլ ենք բերում այս, որովհետեւ մենք երբ մի երկու ռուբլի որ եւ բարեգործական նպատակով տալիս ենք, ուզում ենք, որ այն ի տար աշխարհի թմրեկաւորի, մինչեւ սա հակառակ է, սուս ու փոս գցել է 100 ր. թղթադրամ եւ անկարող է մնալ:

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրապոլ, ապրիլի 4-ին

Այս օրերս կարգացի պ. Ա. Միսիրեանի «Փրօնք Շիրակի ամբարներից» վերնագրով գիրքը, որ հրատարակված է Մոսկվայում: Այդ գիրքի առաջաբանի մէջ, IX-դ երեսում, յարգելի խմբագրութիւնը, խօսելով «Մշակի» թղթակից հանգուցեալ, Ա. Միսիրեանի մասին, գրում է՝ «Հանգուցեալը ազատ միջոցներով զբաղվում էր գրականութեամբ եւ, ի միջի այլոց, երկար տարիներ աշխատակցում էր «Մշակ» լրագրին Շիրակեցի եւ այլ կեղծ անուններով տակ:

Պարտք եմ համարում յայտնել, որ հանգուցեալ Ա. Միսիրեանը իր թղթակցութիւններով տակ ստորագրում էր «Տեղացի» կեղծ անունը, իսկ Շիրակեցի ստորագրութեամբ, ինչպէս յարգելի խմբագրութեանը յայտնի է, 1882 թիւի մինչեւ այժմ եւս եմ գրում:

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Յայտնի է, որ կովկասեան յօրեկանական վերջին ցուցահանդէսը ունեցաւ մօտ 24,000 ռուբլու զէֆիցիտ: Ոչ մի տեղից միջոց չը գտնելով այդ զէֆիցիտը ծածկելու՝ կովկասեան Գիւղահանգեանական ընկերութիւնը դիմել է իշխան կառավարչապետին՝ խնդրելով տալ այդ գումարը կամ պետական զանձարանից եւ կամ դէմաւ տույլի միջոցներից, որպէս զի Գիւղահանգեանական ընկերութիւնը հնարաւորութիւն ունի վերջացնել ցուցահանդէսից մնացած գործերը:

Այն մասնաժողովի պարագայները, որ պէտք է մի ընդհանուր կանոնադրութիւն մշակ պետութեան ստորակարգ ուսումնարաններ համար եւ որ Բարձրագոյն հրամանով կազմակերպված է ժողովրդական լուսաւորութեան մի նիստութեան մէջ, սկսվեցին մարտի 19-ին: Մասնաժողովի քննութեանը պէտք է ենթարկվեն հետեւեալ հարցերը.—ստորակարգ ընդհանուր կրթական ուսումնարանների նշանակութիւնը եւ նպատակները, ստորակարգ ուսումնարանների ցանկալի տիպը, դասաւորութեան լիցու, ուսումնարանների պահանջարկեան միջոցները եւ նրանց կառավարելու կարգը, ուսուցիչների իրաւունքները եւ նրանց նիւթական ապահովութիւնը, ուսումնաւարտ աշակերտներին տրվելիք իրաւունքների հարցը, ուսումնարանների կազմակերպութիւնը եւ նրանց կառավարելու առանձնութիւնները պետութեան զանազան մասերում: Մասնաժողովի նիստերը բանալով՝ ժողովրդական-լուսաւորութեան մի նիստը վանաօվսի բացատրեց, թէ ժողովրդական լուսաւորութեան միջնիստութեան ստոր նախարգ ուսումնարանների վերաբերմամբ գոյություն ունեցող օրէնքները չպիտանան մեծ տարբերութիւններ են պարունակում իրանց մէջ եւ այդ տարբերութիւնները կախում ունենն նախ՝ այն ժամանակից, երբ հիմնվել են ուսումնարանները, ապա այն տեղերից, ուր նրանք հիմնված են եւ յետոյ այն հիմնարկութիւններից ու անձերից, որոնք պահպանում են ուսումնարանները: Այժմ այդ զանազան կերպութիւնն այլ եւս անհրաժեշտ է, այն ինչ նրանց գոյութիւնը գործնական մեծ անյարմարութիւններ է պատճառում ինչպէս դպրոցական վարչութիւններին, այնպէս էլ ուսումնարաններին հիմնով անձերի եւ հիմնարկութիւններին: Այս հանգամանքների պատճառով միջոցները ստորակարգ դպրոցները համար մշակել մի ընդհանուր կանոնադրութիւն, որը վերացնելով գոյութիւն ունեցող անյարմարութիւնները, աւելի լայն ապարդէզ բանար հասարակութեան առաջ զանազան տեղերում ուսումնարաններ հիմնարկելու ժամանակ եւ մի նոյն ժամանակ դպրոցական սիւսումի մէջ մտցնէր անհրաժեշտ միութիւնը:

Պատահաբարական գլխաւոր վարչութեան մէջ կազմակերպված խորհրդակցութիւնը, որի նպատակն էր կանոնաւորել պատահաբարական ծառայողների աշխատանքը, որոնց նրանց օրական պարագայութիւնների ժամանակ համար փակել 8—10 ժամով եւ ծայրահեղ դէպքերում միայն թոյլ տալ 12 ժամվայ աշխատանք:

«Кіевск. Гас.» լրագրին հետադրում են թէ Մաքսիմ Գորկին հիւանդացել է թոքերի բորբոքման լուրջ ձեւով:

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Քաղաքիս բոլոր կարօտեալները Կարմիր Սառլ ենք ընկերութիւնից եւ կոմիտէից ստանում են ձրի դեղեր եւ բժշկական օգնութիւն: Կարմիր Սառլ երկրորդ թիւնը այս նպատակի համար որոշել էր դեռ

Լէյդէնի ծննդեան Էօթանանամակի տօնա-
խմբութիւնը: Բժշկապետ Եակօր հաղորդեց
Նովորոսիսկի համալսարանի կողմից, թէ վեր-
ջինս Լէյդէնի ընտրել է իր պատուաւոր ան-
դամ Խոսեֆին 18 տար պատգամաւորութիւն-
ները ներկայացուցիչներ, որոնց թիւում եւ առե-
սաց ընկերութիւններէից շատերը, որոնցից 8-ը
Լէյդէնի իրանց պատուաւոր անդամ են ընտ-
րել, նոյնպէս եւ ֆինլանդական բժիշկներէի ըն-
կերութիւնից եւ Եստօնիայի բժիշկներէից: Լէյ-
դէնը չորսնակութիւն յայտնեց բոլոր հոգեւոր
ներին առանձին առանձին:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱԶԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով,
փակագծում թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք թիֆլիսից—Բագու շարքով
մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցե-
րեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է
Բագու գիշերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է
գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր.
(11 ժ. 39 ր.) հասնում է թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր.
(1 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Բագուից դուրս է գալիս
գիշերվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է թիֆլիս
երեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս
թիֆլիսից Երեկոյան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.),
հասնում է Բագու ամառուտան 8 ժ. 33 ր. (9 ժամ
31 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս
ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է թիֆլիս
ամառուտան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս
թիֆլիսից ամառուտան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.),
հասնում է Բագու Երեկոյան 9 ժ. 28 ր. (11 ժ.
26 ր.):

Պատասար գնացք Բագուից դուրս է գալիս
երեկոյան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է
թիֆլիս ամառուտան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.),
դուրս է գալիս թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր.
12 ժ. 45 ր.), հասնում է Բագու ամառուտան 6 ժ.
33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս
ամառուտան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է
թիֆլիս Երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս
է գալիս թիֆլիսից Երեկոյան 9 ժ. 36 ր. (10 ժ.
34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր.
(3 ժ. 10 ր.):

Պատասար գնացք դուրս է գալիս թիֆլիսից
դէպի Կարա Երեկոյան 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում
է Ղարաբաղի լիսա ամառուտան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.),
Ալէքսանդրօպօլ 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.),
Կարա ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պատասար գնացք Ղարաբաղից դուրս է գալիս ցե-
րեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէք-
սանդրօպօլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաբաղի-
լիսա գիշերվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), թիֆլիս
ամառուտան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Խաւն գնացք թիֆլիսից դուրս է գալիս ցե-
րեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանա-
հիկ ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Ղարաբաղի-
լիսա Երեկոյան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Խաւն գնացք Ղարաբաղի լիսայից դուրս է
գալիս ամառուտան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հա-
սնում է Սանահիկ ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.)
և թիֆլիս Երեկոյան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՄՆԻՍՏՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիս, Վորոնցովի արձանի հանդէպ)

Ա. մ. 6 օր, բացի կիրակի օրերից:
Ա. Ռ. ԽՈՏԵՆԵՐԸ

Բ. Ս. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժու-
թեան, վնասական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և
ներքային:

Կ. Բ. Գրիկով—12—1 ժ. սկանչի, քթի և կո-
կորդի:

Զ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց և
երեխայից հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և
երեխայից:

ԵՐԵՎԱՆԻ

Ն. Ն. Ռոստոմբեկով—5—6 ժ. վիրաբուժութեան
և մորթու:

Ա. Ն. Եպիփանի—6—7 ժ. ներքային (Երեկ
արարով), վնաս. և մորթու:

Գ. Ա. Թարխանեան—7—7/2 ժ. ներքին և
երեխայից:

Բ. Ա. Նաւասարդեան—7/2—8 ժ.

Վճար 50 կ. չքաղերը ձրի համախորհրդի
(կոնսիլիումի) և օգնարարի համար առանձին:

Օ. Տ. Առվանիսի—տանը. ծաղկահատ և բը-
ժըղկան մարմնավոր. զինել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ:

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Առաջնակարգ հիւանդ

ՎԱՐՈՐԱ

(Նախկին Բաղդի)

նոր բացված

Թիֆլիսի կենտրոնում, Միքայելեան հրապա-
րակ, № 29, իշխան Վորոնցովի արձանի մօտ:

Համարները՝ սկսած մի բուլբուլց:

Ճաշարան. պարտէզ.

Խոհանոցը՝ ֆրանսիական եւ տեղական:

Գինիներ՝ արտասահմանեան եւ տեղական:

Հիւրանոցում կայ փանա եւ դուշ:

Տեղեֆոն № 800:

(Կ. հ. կ.)

1—10

ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻԹՈՒՄ

որ տեղափոխվում է Մօսկվա, հարկաւոր է Մի
ՀԱՅՈՒՀԻ, որ պարագլէր հայերէնից փոքրիկ
երեխայի հետ:

Հասցէն. Արաս-Արատովայա հրապարակ,
տուն Միքիմանովի, բնակարան Եանազարեան-
ցի:

3—4

Թիֆլիսի ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՇՐՋԱ-
ՆԻ ՄԻ ԽՈՒՄԻ հրաւիրում է այն անձանց, ո-
րոնք ունեն ստացումներ, առեւտրական կամ
արդիւնագործական ցէղ, մասնաւոր խորհր-
դակցութեան, որ պէտք է տեղի ունենայ այ-
սօր, ապրիլի 7-ին, ժամի 12-ին, քաղաքային
իշխանի ուսումնարանի բնակարանում, Աղա-
Մուրադովի տանը, Հաւաքարում, Բէզլեա-
րովսկայա փողոցի վրա, առաջիկայ 1902—1906
բառամեակի համար ձայնաւորների թեկնածու-
ների ցուցակ կազմելու:

2—2

Հոյս տեսաւ

Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՏՆԵՐԻ № 3

ՎԱՐԱԿԻԶ ՀԻՄՆԻՍՏԻՆԵՐԸ ԵՒ ՆԸ-
ՐԱՆՑ ԹՈՅՆԸ

23 նկարներով

Գինն է 15 ԿՕԳ.

Մախվում է «Կենտրոնական» եւ «Գուտ-
տենբերգ» գրափառանոցներում եւ հե-
ղինակի մօտ (Տիֆլիս, Դ—Բ Բարսի).

5—10

ԳՆՈՒՄ ԵՄ

պատասխան մարկաներ (բանցրած) Պարսկա-
ստանի եւ Տաճկաստանի Դիմիլ Բաքու, Միրա-
Աբապով, Միխայլովսկայա, 8. Կամ Բապով, Մի-
շա-Աւակով, rue Mikailowski, 8:

5—10

Պետերբուրգի բժշկական փորձութեան
թղթաւորութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի,
փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու եւ ամրացնելու հա-
մար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել
Նաեւ բողբոջին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱԹԸ

Երեւանի քննութիւն եւ սպիտակութիւն
տալու համար, ոչնչացնում է արեւի պատ-
ճառած սեւութիւնը, մոնները, տալիս է
կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն:
Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը,
արկղիկի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ.
Մախվում են բոլոր պարֆիւմերական եւ
զեղաւաճառական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուր-
գում, Պուլկինեան փողոց, ա. № 15, բը-
նակարան № 22. պահեստը բաժանմունք-
ները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկա-
սեան զեղատան ապրանքների վաճառման
ընկերութեան խանութում՝ Երեւանեան
հրապարակ եւ նրա բաժանմունքում, Մի-
քայելեան փողոց եւ Բազում. Նաեւ Մի-
քայելեան կամուրջի վրա, Պոպովի եւ Ա-
րխատովի զեղատներում: Օտարազգա-
քացիների պատուէրները կատարվում են
անմիջապէս պատուով:

75—100

ԳՈՒՏՏԵՆԵՐԻԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ


վաճառվում են

«Արմէնիա», Լինչի (պատկերազարդ, անգլիերէն լեզուով)—25 ր.
«Գիրք թղթոց, Մատենագրութիւն նախնեաց»—1 ր. 50 կ.
«Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնը», գրեց Ն. Բիւզանդացի—1 ր. 50 կ.
«Երեցողութիւն սրբոյ պատարագի Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ, փոխարկաւ
եւ ներդաշնակաւ լեզուի եւ ի չորիս ձայն», ի ձեռն Մ. Եկմայեան—10 ր.
«Բարեւանդ ջրարայի գաւառ», գրեց Ս. Հայկունի—1 ր. 50 կ.
«Հուլիսիկ եւ Սամէլ Հովիկ» (հայ հովիւն ու հովուհին) Ս. Հայկունի—10 կ.
«Բարակ աշխարհ եւ անուշ շահ» » » 10 կ.
«Մոքոս», ժողովրդական վէպ » » 25 կ.
«Թագաւոր Լուսիկ եւ Սեւին Հովիկ» » » 25 կ.
«Այստ երկաթ», «Հիւսիսի արծիւ» եւ «Տանջանքի բովից»—Այվազեանի—2 ր. 30 կ.
«Գրպանի առյուծ», Էֆրեկեանի, կազմված—1 ր. 75 կ.
«Արձակ բանաստեղծութիւններ», թարգմանութիւն Ա. Մատուրեանի—50 կ.
«Ոյժեր» (բնական ոյժերի գաղտնիքը) Չիլ. եւ Լաշա—10 կ.
«Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ», Գ. Ղազարեանի, կազմված—90 կ.
«Ազատութեան մասին», Միլլի, թարգմանութիւն Ա. Կ.—1 ր. 20 կ.
«Հեղինէ», վէպ երկու մասից, տիկ. Մ. Սատիսեանի—1 ր. 75 կ.
«Պատկերներ», Ա. Ահարոնեանի, կազմված—1 ր. 40 կ.
«Իրրունի», պատկերազարդ թերթ (որերի օգտին)—1 ր. 20 կ.
«Զէյթունի անցեալն ու ներկան» (Զէյթունի եւ Կիլիկիայի բարոյէզով)—1 ր. 50 կ.
«Ընտրի Հայկազունը», պատկերազարդ, հ. Թորոսեանի—2 ր. 50 կ.
«Հիպոստիզմ», Հ. Արիւսեանի—50 կ.
«Մաքնէտիզմ», թարգմանութիւն Փարմազի—15 կ.
«Նամակներ առ Սանդրո եւ բարեւ մնաք իմ յոյսեր», Պ. Աղամեանի—20 կ.
«Ի. Կ. Թուրեան» (կենսագրութիւն) պատկերով, Վրոյրի—20 կ.
«Բերթուածը եւ թարգմանութիւնը», Պ. Աղամեանի—1 ր. 25 կ.
«Ժողովրդական վէպ եւ հէքիթ», Եմեանեան ազգադրական ժողովածու, գրեց Ս. Հայ-
կունի—1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисть. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустьяну Лорис-
Меликовская ул. № 11. 1—3

ВЕНДОРФСКИЙ МЕТАЛЛИЧЕСКИЙ ЗАВОДЪ АРТУРЪ КРУПНЪ

ВЪ МОСКВѢ, на Кузнецкомъ мосту



рекомендуетъ гостиницамъ и хозяйствамъ свои
издѣлія изъ массивнаго МЕТАЛЛА
„А Л Б П А К А“

Было серебристаго цвѣта

ВЪ натуральномъ видѣ, и покрытыя густымъ слоемъ чистаго серебра.
А также КУХОННАЯ ПОСУДА изъ ЧИСТАГО НИКЕЛЯ
Въ продажѣ во всѣхъ лучшихъ торговыхъ хозяйственныхъ предметовъ.

ԹԻՓԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԽԱՆԱՍՆՈՐՈՒՄ

վաճառվում են

ԲՈՒԴՈՒՂԱՆԱՆ Ա. բժ., Վիրաբուժական հիւանդութիւն եւ օպերացիա, Պետերբ., 1902 թ. գ. 5 կ.
ԲԱՐՈՒՌԻՆԵԱՆ ԳԵՈՐԳ, թարգմ. դերմ., Գէօրգէ—Մատուտ, հեղինակի պատկերով, Թիֆլիս,
1902 թ. գ. 2 ր.

ԷՖՐԻԿԵԱՆ Հ. Ս., Բնաշխարհիկ բուսական, պրակ չորրորդ, Վնեստ. 1902 թ. գ. 1 ր. 50 կ.
ՆԱՐԴՈՍ, Սպանված աղանձին—վիզակ, Բագու, 1901 թ. գ. 30 կ.
ՓԱՓԱՋԵԱՆ Վ., Էմա, վէպ ժամանակակից բարբերի, Թիֆլիս, անկազմ—1 ր., չքեղ կազմով—
1 ր. 50 կ.

» Իմը, Վտակ, դրական—բանասիրական ժողովածու, անկազմ 1 ր. 50 կ., կաշեկազմ
1 ր. 90 կ. եւ չքեղ կազմով 2 ր. 25 կ.

ՊԱՏԿԱՆԵԱՆ Ռ. (Գամառ-Բաթրիպա), Բանաստեղծութիւններ—50 կ., չքեղ կազմով 1 ր. 25 կ.
» Ընտրի երկասիրութիւններ, երկու հատոր, անկազմ 3 ր.
չքեղ կազմով—4 ր.

ՄԻԹԱՐ, պատկերազարդ չքեղ հրատարակ., Վնեստ. անկազմ 2 ր., չքեղ կազմով 2 ր. 50 կ.
ԹՈՐՈՍԵԱՆ Հ. ՅՈՎՀ., Ընտրի Հայկազունը, բ. տիպ, պատկերներով, Վնեստ. չքեղ կազմով 3 ր.
ԱՐՈՎԵԱՆ Խ., երկասիրութիւններ (Վէրք Հայաստանի եւ ուրիշներ), Մօսկ., անկազմ 1 ր.
չքեղ կազմով 1 ր. 75 կ.

Նոյն տեղը ծախվում են եւ պարզեւտարութիւնների համար չքեղ կազմերով հայերէն եւ
առեւերէն ամեն հասակի համար գրքեր:

Դիմել՝ В Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 0—1



ՍՍԱՑԵԼԵՆԷ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԳԱՐԱՆԱԹԻՆ ԵՒ ԱՄԻՐԱԹԻՆ ՍԵՋՈՆԵՐԻ ՀԱՄԱՐ

տղաւարդկանց, կանանց եւ

երեխաների

ՊԱՏՐԱՍԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Ընդունում ենք, մեր կողմից, ամենայն
տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ (ՅԱԲԱՅԻ), որոնք ըս-
տացված են արտասահմանեան եւ ուսումնական ամենա-
յայտնի զործարաններից:

Մագաղինին կից բացել ենք նոր բաժան-
մունք, բացառապէս կանանց վերնազգեստնե-
րի համար, կարված տանապարհային տարազով:

Գները՝ ԱՄԵՆԻԹԻՆ ՄԱՋՆԵԼԻ ԵՆ

Դիմել՝ Եղը. ԽՈՒԴԱՎԵՐԻԵԱՆՆԵՐԻՆ

Գործիչների պրոպէկտ, տուն Գալլէթեան ա. Գէորգ եկե-
ղեցու, առաջին գիմնազիայի հանդէպ:

16—20